



ԲԱԶՄԱԿԷՂ



ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1898 ՀԱՏՈՐ ՄՉ ՔՉ ՓԵՐՐՈՒՄ

ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆ Ը

(Շար. և վերջ. տես յէջ 6)

Ք.

ԱՍԿԻ յառաջ տեսանք, թե Եղիշէի պատմութիւնը ժամանակակից գրութեան ամենայն կերպարանքը կը կրէ, և թէ այդ երկը ի սկզբան վասակայ մահումբը կը վերջանայր: Առաջին յեղանակին մեկ հատածը՝ հիմն

տանելով, որ քաղաքական պատերազմի յայտնի ակնարկութիւնն է, ցոյց տուինք որ եօթն յեղանակէր շարադրուած ըլլալու են անշուշտ յամին 457 կամ 458, այս է՝ Յաղկերաի մահուընէն անմիջապէս կամ քիչ

տերազմին՝ քանի մը տարի դեռ ապրեր էր ի Դուան Պարոյից (Փարպեցի 288), ըսենք մինչև ց485 կամ 486. Եղիշէ անոր մահուընէն ետքը կը դրէր զեօթն յեղանակը, և յոր ժամանակ ապստամբութիւնը շատոնց ընկճուեք և Պարակահայաստան խաղաղեր էր: Նահանգի մը մեջ կուսակցութեանց մեկուսն ապստամբելովն, տէրութիւն մի յանձն իւր բաժանեալ չըլլար. իսկ զայն նուաճելն՝ բաժանման եղիչ հակառակն է, և նուաճող տէրութեան՝ աւելի զօրութեանը և տեսականութեանը նշան՝ քան մտաաւուս կործանմանը:

1. Այդ հատածը վարդանանց ապստամբութեան չի կրնար վերաբերիլ. վասակ յետ պա.

եաքը : Ըսինք եւս, որ Ուլթերորդ յեղանակին հանդարտ գրութիւնը և խորհրդածութիւնըը մեծապէս կը տարբերին միտոց վառվառն և բանաստեղծական ձեւէն. վասն որոյ հարկ համարեցանք՝ ոչ միայն Եօթնեորդիին և Ուլթերորդիին շարագրութեան մէջ տեղը ժամանակի երկար միջոց մը դնել, — զոր Ուլթերորդին մէջ ճառագրեալ դիպաց թուականօք կարելի է հաշուել, — այլ և հեղինակին կենաց մէջ մեծ այլայլութիւն մի ենթադրել :

Ուլթերորդ յեղանակին վերջերը¹, յետ ասելոյ թէ Պերոզի գահակալութեանը վեցերորդ տարին, այս է 464ին (անիշխանութեան երկու տարիներն ի բաց թողոյմ), խոստացաւ շնորհել զիեանս նախարարաց և անբաժնի զնոս պատուով, Եղիշէ մէկէն ի մէկ կ'ընդհատէ խօսից շարքը, և նախարարաց զարձը պատմելու ձեռնարկել յառաջ, կ'ուզէ նոցա բացակայութեան միջոցին՝ կանաց կրած տառապանքը նկարագրել, և ապա խօսել վերստին նախարարաց վրայ, որք արդէն եկած էին ի բնագաւառս իրենանց, երբ այդ սողերդ կը գրէր Եղիշէ : Այդպէս պարտ է իմանալ անտարակոյս սա խօրքս. «բայց ի տեղի այսր՝ ինչ դարձեալ պալ պիտի» և ոչ թէ Եղիշէ այսու խոստացաւ ապագայ իբրաց պատմութիւն մը, վասն զի կանանց նկարագիրն անցելոյ ժամանակի կը վերաբերի և ոչ քի ներկայի : Գրութեանը այդ մասերէն կը հետեւի, որ Եղիշէ նախարարաց վերագործէն, այս է 464էն, ետքը ի գիր առաւ զՈւլթերորդ յեղանակն : Աբրահամ խոստալանողի համար՝ թէ Եղիշեայ և թէ փարպեցոյ ըսածներէն ալ յայտ է՝ թէ նա ի Հայս դառնալէն (463էն) յետոյ բազում տարիներ դեռ ապրեցաւ : Ուլթերորդ յեղանակն ուրե՛նն 470էն յառաջ չի կրնար գրուած ըլլալ. որով ասոր և Եօթնեորդիին մէջ կ'ունենանք զոնէ տասն և երկու տարուան միջոց մը :

Ապաքէն մարգուս հասակին մէջ կու գայ ժամանակ մը, յորմէ հետէ երկուտասան ամաց հոլովմամբ՝ մեծ փոփոխութիւններ կը

կրեն սիրաբ և միտքը : Բայց Եօթն յեղանակաց և Ուլթերորդին մէջ տեսնուած տարբերութիւններն այնքան կարեւոր են, որ գուցէ այդպիսի երկայն միջոց մ'անդամ անբաւական ըլլայ անոնց պատճառը մեկնելու : Մինչ առաջին Եօթն յեղանակաց մէջ ամփոփեալ պատմութիւնը կրից աստիճանութեան՝ իմաստից մեծութեամբ և ասացածոց աւելիոծ թաւալմամբն՝ դիտարկելութեան կերպարանք կ'առնու, Ուլթերորդը՝ գրեթէ զսրկ ի պատմական հանգամանաց, թախծագին՝ բայց միակերպ և հանդարտ ոճով՝ ընտիր վկայաբանութիւն մի է : Երբ վազգեսի անապատին մէջ եղած խօսակցութիւնը ընթեանու որ, ինքն իրեն կը հարցնէ թէ ո՞ր է այն՝ որ առաջին Եօթն յեղանակաց մէջ կրակ և մոխիր կը ժայլկէր անպարթ Յազկերտի և անոր գործակցայ զժ. և թէ ի՞նչ պէս կը հաւանի արդ Ղեւոնդեանց դահճաքը՝ արեգական կողմութեան և բժշկութեան վրայ զեղեցիկ և մանրակրկիտ ճառախօսութիւններ ընելու¹ : Այս պատճառներով ամանք ի բանախորտ տարբեր հեղինակի երկասիրութիւն ուզեցին համարել զՈւլթերորդն : մինչև անգամ օտարագրի հայտգէտ ոճն, վէճը փակելու համար, ասաց, թէ «այդ ինչիրդ Հայոց մտալուզութիւն պատճառելու չէ. վասն զի փոխան մէկ Եղիշէի, երկու Եղիշէ ունեցած կ'ըլլան, ինչպէս որ Երայցեցիք ալ երկու Ետայի ունեցած են» :

Մեզի համար ալ զօտարին պիտի ըլլար բացարձակ կարծիք մի յայտնել, եթէ անանուն կենսագրութեան մէջ զոր յիշեցինք յառաջագոյն, ինչպէս և ի հին Յայսմաուրս, երկարօրէն պատմուած չըլլար Եղիշեայ կենցաղոյն մէջ հանդիպած մէկ մեծ փոփոխութիւնն, որով Եօթն յեղանակաց և Ուլթերորդիին մէջ տեսնուած տարբերութիւններն բնական կ'ըլլան ու կը մեկնուին :

Այդ յեղափոխութիւնդ կրնանք յետագայ կերպով համատեսել. Եօթն յեղանակները ի գիր առնելէ յետոյ, ըստ հրամանի Գաթի Մամիկոնեանի (457—458), Եղիշէ «եթող

1. Տե՛ս Եղիշէ՝ էջ 354 :

1. Եղիշէ, էջ 293—296, և 304—306 :

զգինուորութիւնն¹» և իւր այնքան շրջապայծառ
աշխարհներն և այցելած հարիւրաւոր գեր-
դասաւաններն², «կրօնաւորեցաւ»³ . իմանամ՝
միանական միաբան եղաւ, որովհետեւ, որպէս
կարծեմ, լեռներու վրայ առանձին խուղերու
մէջ խուճբ խուճբ բնակող միանձուկը չկային
ի Հայս, ու ինքզինքը բոլորովին կրօնական
ուսմանց նուիրեց : Այդ երկրորդ սասարիզին
մէջ շարագրեց ի մէջ այլոց, զճառս «Միան-
ձանց», «ի թարգր լերին» և «Չարարա-
նաց», զորս սօճից ասթիւ իւր եղբայրակցաց
ուղղած է : Ասոնք (ի բաց առեալ Միանձանց
ճառին երկրորդ մասը) Եղիշէի մտաց ինքնա-
բուղիս և ազատ ծնունդքը չեն, վասն որոյ և
ոչ պատմութեանը պէս ծայրէ ի ծայր դիրա-
սահ և զուարնայի. հասնորէն կրօնական
մատենագրութեան մէջ առաջին փորձն եղաւ
«Գոստաւորաց մեկնութիւնը» . հետզհետէ
միւս զգիւարներն իրարմ կատարեալ կ'ելլեն,
ու կը յայտնեն առաւել լինող հմտութիւն
և մարտութիւն⁴, քերականական ճշգրտութիւն,

պարբերութեանց կազմութեան մէջ մեծադոյն
արուեստ, և ի ճառին Չարարանաց, որոյ
նիւթը երբեմն կը ներէ նմա ազատօրէն
ճարտելու, տեղ տեղ աւելի ևս վեճ և զօ-
րաշոր հանձար, քան ի պատմութեան :

Մական Եղիշէ չգոհացաւ միաբանակեաց
ճգնութեամբ. թողուց զիւր եղբարան և իբր
առանձնակ անապատաւոր քաշուեցաւ Մովսե-
ժովեզերեայ լեռներուն վրայ, քարանձախ
մը մէջ ապրելու համար, հեռի յարմեանց
ընկերութենէ և նոյն իսկ ի միայնակեաց⁵ :

Ի չորրորդ և ի հինգերորդ գարուն, քրիս-
տոնեայ աշխարհաց՝ նա մանաւանդ Ասորոց
և Եղեկատսի մէջ, հանձարեղ մտաց և
զգայուն սրտի տէր անձանց շատերն՝ ուսումնին
աւարտելէ և բազմամբոխ քաղաքաց շի-
թութեանց և յուզմանց փոքր ի շատէ ա-
կանատես և մասնակից լինելէ յետոյ, ա-
նապատները կը քաշուէին. խոտածարակը,
խարազնազգեստը և գետնախառնէ անկողնօք
կ'անցնէին զսօրեայ կենցաղան, աղօթիւք,
ընթերցմամբ, խորհրդածութեամբք և հիւց-
մամբ կը բարձրացնէին մտքերնին. կէսքն
լեռնաձորոց մէջ կը վերջացնէին իւրեանց
օրերը. այլք ինքնաբեր կամօք կամ ժող-
վրդեան թախանձանօք՝ եկեղեցական կարգ
և աստիճան ընդունելով՝ նորէն քաղաքական
կենցաղ կը դառնային : Խոտալար առանձնա-
կեցութիւնը միայնակեցին խառնուածոցը հա-
մեմատ՝ տարբեր ներգործութիւններ կ'ընէր
անօր բնաւորութեանը վրայ . Հիւանդոտ և
տաքցուխ բնութիւնները՝ անապատի կեանքը
աւելի կը զայրացնէր ու ծայրայեղութեան և
երբեմն ալ յիմարութեան կը տանէր. եթէ
պատահմամբ կամ պարագայից ստիպմամբ ի
քաղաք իջանէին, աղմուկ և աստելութիւն
միայն զհակէին զգրուել . իսկ ողջ և կարին
մտաց՝ անսովոր կորով կու տար. անապատին
մէջ՝ գմարդիկ առանց կրից և հանդարտօրէն
դատելու վարժելով, աւելի սէր և զուճ
կը զգային, մարդկային սկարիթեանց աւելի
համբերող և ներողամիտ, և աշխարհիս վշտե-
րը դարմանելու աւելի յօժարակամ և անձ-

1. Տես քաղուածոյ մի ի Յայմաւուրաց, զոր
ի մէջ բերէ հ. Գարեգին վ. ի Հին Դպրութեան.
(էջ 313):

2. Ի կանանց առաքինեացն և կապելոցն և
անկեղցն ի պատերազմին, Եղիշէ հինգ հա-
րիւրով շափ յականէ յանուանէ ճանաչէր. (էջ
354):

3. Տես Հին Դպրութիւն. (էջ 313):

4. Պարսկերէն բառեր առատապէս գործա-
ծուած են յետին յեղանակս, և շատ անգամ
յանպատ. աշխարայ (ashkara), ապարտանել
(awartani), լաշկար (laskar), հրամանատար (հա-
madar), գեան, փոքրախոյ, զընդամ, փոշոտիպան,
և այլն, թող անսովորներն : Զինուոր եղած ա-
տենը Պարսից հետ ունեցած առընչութիւնքը և
պարսկերէնի յաճախ կիրառութիւնը սրում
քաջ տեղեակ կ'երեւէ, Եղիշէի լեզուին վրայ ալ
ունեցած են իրենց ազդեցութիւնը. մեզ ան-
կարելի կը թուի՝ որ մանաւանդ Չարարանաց
ճառը, որոյ հարազատութեանը բնաւ տարակոյտ
չունինք, ետին յեղանակներէ յառաջ գրուած
ըլլայ, որպէս աստ հ. Գարեգին վ. ի Պատմութեան
հայ Դպրութեան. իսկ ութերորդին շարագրու-
թիւնը կարծեմ ընդհանուր վկայութեամբ, գե-
րազանց է քան զամենեսին :

1. Տես Սփ. Տպ. ԺԱ, էջ 40-43:

նուէր կ'ըլլային : Այգպիսիներն իւրեանց երկրորդ քաղաքական ընթացից մէջ մեծա- մեծ գործոց ձեռնարկելով, անվեհեր արիւ- թեամբ և անյողզող յարատեւութեամբ ի գլուխ հանեցին և յոյժ օգտակար գտան աշ- խարհի : Դոցա կարգէն են Ոսկեբերան և Մեարոպ :

Լեւոնային կեանքը Եղիշէի ալ հանգարա տութիւն բերաւ : Երբ արդէն շարադրած եօթն յեզանակաց վրայ՝ տասներկու տարի ետքը՝ ութերորդ մը աւելցնել ուզեց, միաքը և սիրաբ մեծ փոփոխութիւններ կրեր էին, բարկութիւնն իջեք, անուշ տիրութիւն մը յայտուիբ էր : Աստուծայ և կրօնից սէրը ան- շուշտ չէր նուազ անխառն և զօրաւոր, բայց մարդկային յանցանքն առաջնոյն պէս զայրոյթ չէին պատճառեր : մինչ երբեմն զանոնք խտաի կը գատապարտէր, այժմ աստուածային կամաց համակերպելու վարժեր էր : Վառ- վրուռն երեւակայութիւնը՝ անզի սուած էր իմաստասիրական իսկմանց : փոխանակ մարդ- կային նենգութեանց և կուտոց, բնութեան կանոնաւոր և զեղեցիկ երեւոյթքը զբաղե- ցուցեր էին զմիտ իւր : Պէտք չէ եւս մոռնալ, որ ութերորդ յեղանակը, որ միւս եօթանց կիսին շափ ընդարձակութիւն ունի, ակա- նատես պատմչի երկասիրութիւն չէ (ի բաց տեսել կանանց վերարբերող գրուածն և ինչ որ անցելոյ աստ անդ անդապարձութիւնք են և ակնարկութիւնք) : Դեւոնդեանց նահատա- կութեանն ի վեր ալ գոնէ տասն և վեց տարի անցած էր, վասն որոյ կենդանի նկարագրու- թեանց տեղը պիտի բռնէին խորհրդածու- թիւնք :

ՄԱՐԱԲԱ ՄԾՈՒՐՆԱՅԻ*

Կ Ա Մ

Կ Ե Ղ Մ — Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս

Ի Ն Զ Պ Է Ս յայտնի է, Հայոց ամենա- նշանաւոր պատմական գրուածքներից մէկը, այսինքն Սերիտի պատմութիւնը՝ Հերակլ կայսեր մասին, որը երկար ժամանակ կո- րած էր համարվում, ներկայ գարուս 40-կան թուականների զանուեց Էջմիածնի զիւնա- կան եպիսկոպոս Շահաթունու Զանդով : Այդ պատմութեան սկզբում կայ երկու հա- տուած, որոնք, ըստ երեւութիւն, չեն պատ- կանում Սերիտին և յետոյ են կցած նրան : Այդ հաստուածներից երկրորդը, որ ամփոփում է Պարսից Սասանեանների (227—652), Հայ Աբշակունիների՝ մինչեւ Դ գարու վեցը, ու Հոմո—Յունական կայսրների՝ Ալեքիդանու սից մինչեւ Հերակլ՝ ժամանակակցական ա- ղիտակը, պատկանում է Ժ գարից ոչ վաղ ժամանակամիջոցին : Այդ երեւում է նրա վերնագրից և սկզբից, որոնք խորենացու և Ասողիկի հետքերն են կրում : Յիշեալ հա- տուածը չէ եւթարկուելու մեր հետազոտու- թեան : մեզ համար կարեւոր է առաջին՝ հաւանականորէն աւելի հին հաստուածը, որ պարունակում է Հայոց նախնական պատմու- թիւնը մինեւ Հայ Աբշակունիների երեւալը :



* Առաջիկայ ղեկակալ գրութեան հաստուած է Լազարեան Զեւեարակի ուսուցչակցութե Գր. Խա- լութեանցի տեսերէն ղերարմակ հետազոտու- րիակից՝ Հայոց վէպը Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ : փորձ աղբիւրների քնն- նադատութեան որչա ստեաս 1896 թ. Մաս- կոաս : Տես գրոյս Բ. « Աւանուներ (կամ որ նոյնն է՝ Մարարա Մժուրեանցի) իրրեւ յետին ժամանակի անկաւեր գրութեք » : էջ 38-103 :

Մաս. Թարգմ.